ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԿՔՎ/ՄԵԴԱԼ/Ա-19 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	ԳՆՈՄՈՆ	ԳՆՈՄՈՆ	ԳՆՈՄՈՆ	ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ	Մեդալը բաղկացած է երկու մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված սկավառակից: Կախիչը պատրաստվում է թեթև մետաղից և դարձերեսի կողմից ունի հատուկ ամրակ՝ պարգևատրվածի հագուստին ամրանալու համար: Կախիչի վերևի մասի երկարությունը 26 մմ է, ներքևի մասինը՝ 46 մմ, իսկ հաստությունը՝ 1 մմ: Կախիչի վերևի մասի երկարությունը՝ կենտրոնից մինչև ներքևի գագաթը՝ վերից վար 50 մմ է: Կախիչը պաստառապատված է մուգ

						մոխրագույն մետաքսյա 24 մմ լայնություն ունեցող ժապավենով: Ժապավենի աջ կողմը վերից-վար ձգվում է կարմիր, կապույտ և նարնջագույն երանգներով 6 մմ լայնություն ունեցող եռագույն ժապավենով: Սկավառակը ոսկեգույն է, պատրաստվում է տոմպակից: Սկավառակի տրամագիծը 32 մմ է, հաստությունը՝ մոտավորապես 3 մմ: Սկավառակի դիմերեսին պատկերված է Հայաստանի առաջին Հանրապետության ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանի ռելիեֆային դիմաքանդակը: Սկավառակն ունի մոտ 3 մմ լայնությամբ եզրաժապավեն, որի վերին գոգավորության մասում ուռուցիկ տառերով գրված է ««ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ»» բառերը, իսկ ներքևի մասում՝ ««1918»» թիվը: Սկավառակի հակառակ կողմն ունի 3մմ լայնություն ունեցող փայլուն եզրաժապավեն, որի վրա շրջանագծին զուգահեռ, ուռուցիկ տառերով գրվում է ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ»» բառերը:

					Սկավառակի հակառակ երեսի հիմնամասը փայլատ է, որի կենտրոնական մասում հորիզոնական գրվածքով գրված են ««ԻՐԱՎԱԿԱՐԳԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ»» բառերը, որոնց տակ կա ուղղանկյուն հարթակ՝ մեդալի համարակալման համար: Մեդալները պետք է արտադրված լինեն դրոշման ճանապարհով, որը կապահովվի մեդալների բացարձակ միանմանությունը և չափերի նվազագույն շեղումները: Մեդալները դարձերեսի կողմից կրում են արտադրողի անվանանիշը՝ հետագա կեղծումներց խուսափելու համար:Տուփի բնութագիրը՝ Թավշապատ, կրծքանշանը տուփի մեջ տեղակայելու հարթակով, չափերը՝ մոտ 120*130*47:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԿՔՎ/ՄԵԴԱL/Ա-19 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1					